



ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԳԻՏԱԿԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)




ԵՐԵՎԱՆԻ
ԳԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԴԱՆ



«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ
ՊՂՆՁԱՄՈՒԼԻԲԳԵՆԱՅԻՆ
ԿՈՄԻՏԵԱՑ» ՓԲԸ



ԳԻՏԱԿԱԿԱՆ ԱՐՑԱԽ



SCIENTIFIC
ARTSAKH

НАУЧНЫЙ
АРЦАХ

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՎՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ

№ 1(2), 2019

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).

ԱԵԳՄՄ – UYSSA – ОМУСА
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2019

Հրատարակության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Рекомендовано к публикации решением ученого совета Ереванского государственного университета

Recommended for Publication by the Yerevan State University Academic Council Decision

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Լախագահ՝ Արամ ՄԻՄՈՆՅԱՆ ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՍԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ
Զուլիետա ԳՅՈՒԼԱՍԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Կոստրոմա, ՌԴ)
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արման ԵՂԻՎԱԶՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Մարել ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Օլշտին, Լեհաստան)
Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Մոսկվա, ՌԴ)
Օտտո ԼՈՒԻՏԵՐՅԱՆՆԻ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Յամբուրգ, Գերմանիա)
Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Սուշել ՀՈՎՍԵՓՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ ԴԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վշոտ ՍԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարին ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յուրի ՍՈՒԿԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Դոնի Ռոստով, ՌԴ)
Գարիկ ԲԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 1(2), 2019, Երևան, ԱԵԳՄՄ հրատ., 2019, 480 էջ:
Scientific Artsakh, № 1(2), 2019, Yerevan, UYSSA publ., 2019, 480 pages.
Научный Арцах, № 1(2), 2019, Ереван, Изд. ОМУСА, 2019, 480 страниц.

«Գիտական Արցախ» պարբերականի 2019թ. 1-ին համարում տեղ են գտել հասարակական գիտությունների արդի հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Իրանի Իսլամական Հանրապետությունը, Լեհաստանը, Շվեյցարիան և Ռուսաստանի Դաշնությունը ներկայացնող 50 անվանի ու երիտասարդ գիտնականների աշխատանքները:

In the first issue of the «Scientific Artsakh» journal in 2019 the works on topical issues of social sciences by 50 well-known and young scientists representing Republic of Armenia, Republic of Artsakh, Republic of Belarus, the Islamic Republic of Iran, Poland, Switzerland and the Russian Federation are published.

В первом номере за 2019-ый год журнала «Научный Арцах» опубликованы работы по актуальным проблемам общественных наук, авторами которых являются 50 известные и молодые ученые, представляющие Республику Армения, Республику Арцах, Республику Беларусь, Исламскую Республику Иран, Польшу, Швейцарию и Российскую Федерацию.

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
 Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
 David BABAYAN, Doctor of History, Associate Professor
 Vahram BALAYAN, Doctor of History, Professor
 Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
 Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Associate Professor
 Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
 Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)
 Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
 Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
 Moushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
 Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
 Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
 Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)
 Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)
 Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
 Edik MINASYAN, Doctor of History, Professor
 Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
 Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
 Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
 Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)
 Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Associate Professor
 Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
 Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
 Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
 Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
 Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
 Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
 Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, доцент
 Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
 Джульетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
 Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
 Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, доцент
 Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
 Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
 Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
 Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
 Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
 Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
 Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
 Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
 Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
 Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
 Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
 Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Միլվա Մուրադյան. Ներգործական սեռի բայ-ստորոգյալների կապակցելիությունը տարբեր դասային խմբերի անուն-խնդիրների հետ.....335
Silva Muradyan. Relationship Possibilities of Transitive Verb-Pradicate with Noun-Objects of Various Class Groups

Сильва Мурадян. Сочетаемость возможности переходных предикативных глаголов с именными дополнениями различных классовых групп

Սիրանուշ Փարսադանյան. Հովհաննես Վանանդեցու «Կերակուր քահանայից» գործը.....343

Siranush Parsadanyan. «Kerakur Kahanayic» («Food For Priests») by Hovhannes Vanandetsi
Сирануш Парсаданян. Работа Ованеса Ванандеци «Пища для священников»

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

Գրիգոր Բալասանյան. Խորհրդային Ռուսաստանում հայառի գրասեյակների գործունեության պատմությունից (1923-1927թթ.).....350

Grigor Balasanyan. From The History Of Armentrade Branches' Activities In Soviet Russia 1923-1927yy

Григор Баласанян. Из истории деятельности отделений Арменторга в Советской России (1923-1927 гг.)

Արման Եղիազարյան. Սոցիալ-դեմոկրատ հնչական կուսակցության գործունեության հիմնական ուղղությունները 1920-1930-ական թթ.....359

Arman Yeghiazaryan. The Main Activity Directions of the Social Democrat Hunchakian Party in the 1920-1930s

Арман Егиазарян. Основные направления деятельности Социал-демократической Гнчакской партии в 1920-1930-х годах

Մելիք Հովսեփյան. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն և եգիպտահայ համայնքը 1964-1985թթ.....372

Melik Hovsepyan. The Committee for Cultural Relations With Armenians of the Diaspora and the Armenian Community of Egypt in 1964-1985

Мелик Овсепян. Комитет по культурным связям с армянами диаспоры и армянская община Египта в 1964-1985 годах

Սերգեյ Մանվելյան. Հայկական հարցի վերաբացումը. հայկական բարենորոգումների ծրագիրը Հովհաննես Արշարունի պատրիարքի օրոք (1911-1913թթ.).....382

Sergey Manvelyan. Evolution of Armenian Issue: Armenian Reforms Program During the Terms of Patriarch Hovhannes Arsharuni (1911-1913)

Сергей Манвелян. Развитие Армянского вопроса: программа армянских реформ при патриархе Ованесе Аршаруни (1911-1913 гг.)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ. ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՇԱՐՈՒՆԻ ՊԱՏՐԻԱՐԵՒ ՕՐՈՔ (1911-1913)*

ՀՏԴ 93/94(479.25)

ՍԵՐԳԵՅ ՄԱՆՎԵԼՅԱՆ

Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական
ինստիտուտի ասպիրանտ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
serqeymanvelyaneph@gmail.com

Հոդվածում քննության է առնվում 1908թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Օսմանյան կայսրության հայաբնակ նահանգներում բարենորոգումներ իրականացնելու հարցում Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի ունեցած դերակատարությունը: Մանրամասն ներկայացվում են ժամանակի պատրիարք Հովհաննես Արշարունու օրոք (1911-1913) Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության համագործակցությամբ հայոց պատրիարքարանի ձեռնարկած քայլերը հայկական բարենորոգումների ծրագրի ստեղծման վերաբերյալ, մասնավորապես՝ պատրիարքարանի բանակցություններն ինչպես կառավարության, այնպես էլ Անտանտի երկրների ու Հայոց ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փառայի հետ: Սույն հոդվածի նպատակն է՝ առանձնացնել և ուսումնասիրել հայկական հարցի վերաբացման համատեքստում Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի գործունեությանը վերաբերող նորահայտ կյուրթը՝ ընդծելով դրանց աղբյուրագիտական նշանակությունը: Ահավասիկ, հոդվածում օգտագործած գրականությունը դիտարկվել է մի շարք խնդիրների իրագործման տեսանկյունից՝ լուսաբանել Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի կողմից կազմված հանձնաժողովների գործունեությունը, բացահայտել պատրիարքարանի կազմած նախագծի ապդեցությունը և կարևորությունը Կ.Պոլսում ռուսական դեսպանատան գլխավոր թարգմանիչ Անդրեյ Մանդելշտամի՝ 1913թ.-ի հունիսի 4-ին ներկայացրած հայկական բարենորոգումների վերաբերյալ ծրագրի պատրաստման գործում: Հոդվածը գրվել է գիտական անաչառության ու վերլուծության մեթոդաբանությամբ՝ քննական մոտեցում ցուցաբերելով օգտագործած սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների նկատմամբ:

Այսպիսով՝ Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի կատարած քայլերը մեծապես նպաստել են հայկական բարենորոգումների իրականացման առնչությամբ արևմտահայության քաղաքական պահանջներն ամրագրելուն:

Բանալի բառեր՝ Հայկական հարց, Կ.Պոլսի հայոց պատրիարքարան, Արշարունի պատրիարք, հայկական բարենորոգումների ծրագիր, Հայոց ազգային պատվիրակություն, երիտթուրքական կուսակցություն, «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցություն, Անտանտի երկրներ:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունը տնտեսապես ու քաղաքականապես կանգնել էր կործանման վտանգի առաջ: Երկիրն օրհասական դրությունից հանելու և կայսրության մոտալուտ վախճանը կանխելու

* Հոդվածը ներկայացվել է 02.05.2019թ., գրախոսվել՝ 24.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

Նպատակով «İttihat ve Terakki» (Միություն և առաջադիմություն) երիտթուրքական կուսակցությունն արդուլիամիոյան բռնապետական ռեժիմը հաստատելու և սահմանադրական կարգեր հաստատելու վերաբերյալ մշակել էր ծրագիր՝ միաժամանակ դիմելով հայ քաղաքական ուժերին՝ դաշնակցականներին ու հնչակյաններին՝ միանաբար պայթարելու համիոյան վարչակարգի դեմ: Սակայն ի տարբերություն դաշնակցականների, որոնք ընդունեցին երիտթուրքերի առաջարկը, հնչակյանները կտրականապես մերժեցին այն՝ միանալով «Hürriyet ve İtilaf» (Ազատություն և համաձայնություն) ընդդիմադիր կուսակցությանը:

908թ.-ի հուլիսին տեղի ունեցած պետական հեղաշրջման արդյունքում վերջ դրվեց Արդուլ Յամիոյի միահեծան բռնապետությանը, և իշխանությունը փաստացի անցավ երիտթուրքական կուսակցության ձեռքը: Կայսրությունում բնակվող ոչ մուսուլման ժողովուրդների, այդ թվում՝ հայերի շրջանում նոր հույսեր էին արթնանում իրենց իրավունքների վերականգնման ու արժանապատիվ կեցության համար:

Մինչդեռ իշխանության գլուխ եկած երիտթուրքերի հակահայկական քաղաքականության հետևանքով արևմտահայությունը հայտնվեց ծանր իրապայմաններում⁷⁷⁵: «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը չկարողացավ պահել Արևելյան Անատոլիայի վեց նահանգներում հայության համար բարենորոգումների իրականացման ծրագրի վերաբերյալ իր խոստումը: «Սահմանադրական» հորջորջվող Օսմանյան կայսրության գործելածը դադարեց վստահություն ներշնչել նաև եվրոպական պետությունների կառավարություններին, ինչի առթիվ հայկական շրջանակները հայկական բարենորոգումների խնդրի լուծումը փորձեցին կապել եվրոպական պետությունների և, գլխավորապես, Ռուսական կայսրության հետ: Միաժամանակ խզվեցին նաև Յայ հեղափոխական կուսակցության ու երիտթուրքական կառավարության հարաբերությունները, ինչից հետո Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը դարձավ միակ միջնորդը հայության ու տեղական իշխանությունների համար:

Ոչ մուսուլմաններին ճնշելու քաղաքականությունը հանգեցրեց նաև արտաքին քաղաքական հիմնախնդիրների սրմանը: Ահավասիկ, կայսրությունում տեղի ունեցած 1911-1912թթ.-ի իտալա-թուրքական պատերազմում կրած պարտության հետևանքով Օսմանյան կայսրությունը վերջնականապես կորցրեց աֆրիկյան մայրցամաքում ունեցած իր գերիշխանությունը: 1912թ.-ի հոկտեմբերին սկսված Բալկանյան առաջին պատերազմի հետևանքով Օսմանյան կայսրության կազմում մնացին միայն Կ. Պոլիսը և Արևելյան Թրակիայի մի մասը: 1912թ.-ին Ալբանիան հռչակեց իր անկախությունը: 1913թ.-ի հունիսին սկսվեց Բալկանյան երկրորդ պատերազմը: Ըստ էության, Օսմանյան կայսրության տրոհումն ու որպես «հիվանդ մարդու» ոչնչացումը գործնականորեն իրագործվեցին⁷⁷⁶:

Երիտթուրքական իշխանությունների պարտությունները հայ հասարակական-քաղաքական շրջանակներում հանգեցրին համոզման, թե վերջնականապես մոտ է Յայկական հարցի լուծումը: Յայկական հարցը կրկին դառնում էր միջազգային դիվանագիտության օրակարգի մաս: Ըստ որում՝ հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը և հայ-ռուսական հարաբերությունների դարավոր փորձը հայությանը ստիպեցին կրկին ապավինելու Յայկական հարցը Ռուսաստանի օգնությամբ լուծելու մտքին: Նախ՝ չկար այլևս ռուս-անգլիական հակամարտությունը, որը նախորդ անգամ կասեցրեց հայկական հարցի առաջխաղացումը, երկրորդ՝ Ռուսաստանի, Անգլիայի ու

⁷⁷⁵ Առավել մանրամասն տե՛ս՝ Աճառեան Յ., Տաճկահայոց պատմութիւնը, Կ. Պոլիս, 1915: Յմտ.՝ Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան 1967, էջ 28-116:

⁷⁷⁶ **Յասարթյան Մ. և ուրիշներ**, Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1986, էջ 214-216:

Ֆրանսիայի միջև լռելյայն համաձայնություն էր կնքվել Օսմանյան կայսրության ասիական տարածքների վերաբաժանման վերաբերյալ⁷⁷⁷: Եվ քանի որ Ռուսաստանին բաժին էր ընկնելու Հայաստանը, հետևաբար Ռուսաստանին էր պատկանում Հայկական հարցին միջամտելու նախաձեռնությունը⁷⁷⁸: Իր հերթին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V Սուրենյանցը 1912թ.-ի հոկտեմբերի 15-ին Կովկասի կառավարչապետ Ի. Վորոնցով-Դաշկովի միջոցով դիմեց ռուսաց կայսերը՝ իբրև «արևելքի քրիստոնյաների վաղեմի պաշտպանի»՝ խնդրելով իր պաշտպանության տակ առնել հայերին⁷⁷⁹: Ռուսաստանը դրական վերաբերմունք ցուցաբերեց դեպի Հայկական հարցը, որն, անշուշտ, պայմանավորված էր տվյալ պահին հայերի ու ռուսների շահերի համընկնմամբ, մասնավորապես՝ այն լայն հնարավորություններ էր ընձեռում Ռուսաստանին՝ բավարարելու իր ծավալապաշտական ծգտումները դեպի հարավ ընկած ուղղությամբ:

1912թ.-ի սեպտեմբերի 9-ին Կ.Պոլսի Ազգային ժողովի որոշմամբ հայոց պատրիարք Յովհաննես Արշարունին արդարադատության ու դավանանքների նախարարությանն ուղարկեց մի դիմում՝ պահանջելով դադարեցնել կայսրության արևելյան նահանգներում քրդերի կողմից հայ բնակչության հանդեպ իրականացվող կոտորածները և շուտափոյթ կերպով իրականացնել օսմանյան սահմանադրության հաստատումից հետո խոստացված հայկական բարենորոգումները⁷⁸⁰: 1913թ.-ի գարնանը կոտորածներն ավելի սաստկացան, ուստի ապրիլի 21-ին պատրիարքի նախաձեռնությամբ Գալաթայի հայկական եկեղեցում գումարված Ընդհանուր ժողովի դռնփակ նիստին ներկայացվեց Կենտրոնական վարչության զեկուցումը հայաբնակ նահանգների վերաբերյալ⁷⁸¹:

Հետաքրքրական է Արշարունի պատրիարքի՝ ֆրանսիական «Թուրքիա» (La Turquie) թերթին տված հարցազրույցը, որում նա արևելյան նահանգներում քրդերի կողմից հայերի սպանությունների և անօրինական գործողությունների մեղավոր է համարում քրդերին⁷⁸²: Հարցազրույցում պատրիարքն առաջարկում էր հետևյալը՝

- Եվրոպացիների հսկողությամբ մեծացնել թուրք ոստիկանական ուժերը,
- Ամեն կողմում հայերի ու քրդերի համար դպրոցներ բացել,
- Մինչ այժմ ոչ կարևոր համարվող արևելյան նահանգներում իրականացնել ճանապարհների ու ենթակառուցվածքների հիմնանորոգում,
- Կառավարությունը տարածաշրջանում ծրագրված բարենորոգումների առնչությամբ որևէ տեղեկություն չի տրամադրել պատրիարքարանին: Հայտնի չէ, թե ինչ է նախատեսված այդ ծրագրով: Նախապես բարենորոգումների նպատակով կազմվել են տարատեսակ հանձնաժողովներ, սակայն դրանցից ոչ մեկը արդյունք չի տվել: Դրանց իրագործման համար ապավինել եվրոպացի մասնագետներին,
- Արևելյան նահանգներ ասելով հասկանալ Էրզրումի, Մամուրեթուլազիզի (Խարբերդ- Ս. Մ.), Բիթլիսի, Դիարբեքրի, Վանի և Սվասի նահանգները և այլն⁷⁸³: Հարկ է նշել, որ վերոհիշյալ կետերն ամբողջական դիմումի տեսքով մայիսի 31-ին պատրիարքի կողմից ուղարկվել են օսմանյան կառավարությանը⁷⁸⁴: Նույնաբովանդակ

⁷⁷⁷ Աճառեան Զ., Տաճկահայոց պատմութիւնը, Կ. Պոլիս, 1915, էջ 71:

⁷⁷⁸ Նույն տեղում:

⁷⁷⁹ Նույն տեղում, էջ 73: Հմմտ.՝ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 53, թ. 47:

⁷⁸⁰ Güllü R. E. Ermeni sorunu ve İstanbul Ermeni Patrikhanesi (1878-1923), Ankara, 2015, s. 409, 410:

⁷⁸¹ Նույն տեղում:

⁷⁸² Նույն տեղում, էջ 412:

⁷⁸³ Bayur Y. H., Türk İnkilabı Tarihi, Cilt: II, Kısım III, Ankara, 1991, s. 69. Հմմտ.՝ Güllü R. E., նշվ. աշխ., էջ 412-414:

⁷⁸⁴ Güllü R. E., նշվ. աշխ., էջ 415, 416:

զեկուցագրերով ու բողոքագրերով Արշարունի պատրիարքը դիմել է նաև եվրոպական պետությունների դեսպաններին՝ մասնավորապես Նշելով. «Որպես պատրիարք՝ այլ ելք չեմ գտնում, քան ապավինել օսմանյան պետության և ազգի պատասխանատվության զգացումին և առաջադեմ աշխարհի խղճին ու ողորմածությանը»⁷⁸⁵:

Հունիսի 10-ին ներքին գործերի նախարարությունը երիտթուրքական կառավարությանն ուղղած զեկուցագրով քննադատել է պատրիարքի բողոքագիրն առ այն, որ «արևելյան նահանգներում հայերի հանդեպ իրականացվող անօրինականությունները չեն ճնշվում պետության կողմից»⁷⁸⁶: Ներքին գործերի նախարարությունն այդ կապակցությամբ փորձել է հանդես գալ հետևյալ պատճառաբանությամբ, թե «ձեռնարկված միջոցառումների արդյունքում ձերբակալվել կամ պատժի են ենթարկվել մի շարք անձինք, սակայն արևելյան նահանգներում տևական ժամանակ միջաշիրտության բախումների պայմաններում անհնարին էր դառնում անվտանգության կանոնների պահպանումը»⁷⁸⁷:

Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի կողմից կազմված հանձնաժողովների գործունեությունը: 1912թ.-ի դեկտեմբերի 21-ին տեղի ունեցավ Ազգային ժողովի պատմական նիստը, որին Կենտրոնական վարչության ատենապետ Ստեփան Գարայանը, ներկայացնելով հայ ժողովրդի ծանր կացությունը, առաջարկեց օգտագործել ընձեռնված քաղաքական բոլոր հնարավորությունները՝ հայկական հարցը միջազգային սեղանի վրա դնելու համար⁷⁸⁸: Հատկանշական է, որ հայկական բոլոր կուսակցությունները և հայ կաթոլիկ ու բողոքական համայնքները համախմբվեցին պատրիարքարանի շուրջ՝ ոչ մի ջանք չխնայելով ընդհանուր գործի հաջողության համար:

Արևմտահայ հասարակական-քաղաքական շրջանակներում ապագայի հանդեպ Նոր տրամադրություններ էին հասունանում, ուստի ընթացիկ իրադարձություններին համահունչ, օգտվելով հայության վաղեմի երազանքն իրագործելու բացառիկ հնարավորությունից, 1913թ.-ին եվրոպական կառավարությունների հետ բանակցություններ վարելու նպատակով կազմվեց Ազգային պատվիրակություն՝ եգիպտահայ ականավոր հասարակական-քաղաքական գործիչ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ⁷⁸⁹: Կ.Պոլսի հայոց պատրիարքարանն իր հերթին սերտ համագործակցություն սկսեց Պողոս Նուբար փաշայի հետ: Պատրիարքարանի նախաձեռնությամբ ու գլխավորությամբ ստեղծվեցին երկու՝ Հարստահարական խորհրդարանական (Ազգային ժողովի կողմից) և Ապահովության (Ազգային Կենտրոնական վարչության կողմից) հանձնաժողովներ, որոնց հիմնական նպատակն էր աջակցել Պողոս Նուբար փաշայի գլխավորած պատվիրակությանը և մշակել բարենորոգումների ծրագիրը, որը պետք է բանակցությունների ժամանակ բացորոշ քննարկվեր եվրոպական տերությունների ներկայացուցիչների հետ⁷⁹⁰: Ապահովության հանձնաժողովի նախագահ ընտրվեց Արշարունի պատրիարքը, իսկ անդամներն ընտրվեցին Կրոնական ժողովից՝ Եղիշե

⁷⁸⁵ Bayur Y. H., նշվ. աշխ., էջ 81:

⁷⁸⁶ Güllü R. E., նշվ. աշխ., էջ 416:

⁷⁸⁷ Նույն տեղում:

⁷⁸⁸ Փափագեան Վ., Հայկական Բարենորոգումները (1912-1914), «Կեն», Փարիզ, 1933, Ա, էջ 92: Հմտ.՝ Ազգային ժողովի երեկի նիստը, «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1912, 22 Դեկտեմբեր: Հայկական հարցը Ազգ. ժողովին մէջ. Միաձայն վստահութիւն Վարչութեան. Հիմնաւոր երաշխիքներ պետք են միայն, «Առաջամարտ», Կ. Պոլիս, 1912, 22 Դեկտեմբեր:

⁷⁸⁹ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Մարտիրոսյան Մ., Պողոս Նուբար փաշան հայ ապագային պատվիրակության նախագահ, Պատմաբանասիրական հանդես, Երևան, 2008, № 3, էջ 49-59:

⁷⁹⁰ Չաւեն Արքեպս., Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 30-32:

արքեպիսկոպոս Դուրյանը և Գրիգորիս վարդապետ Պալաքյանը, Զաղաքական ժողովից՝ Լ. Տեմիրճիպաշյանը, Ոսկան Մարտիկյանը և կոմս Վահան Փափագյանը: Հանձնաժողովի աշխատանքներին ակտիվորեն մասնակցում էին նաև Գրիգոր Չոհրապը, Մուրատ Պոյաճյանը և Հարություն Շահիրիկյանը: Եվրոպական պետությունների դեսպանների հետ բանակցություններում հատկապես անուրանալի է Գ.Չոհրապի դերը, որ մեծ համարում ուներ օսմանյան հասարակական-քաղաքական շրջանակներում: Ինչ վերաբերում է Հարստահարական հանձնաժողովին, ապա այն իր բնույթով Կենտրոնական վարչության խորհրդակցական մարմինն էր, որի անդամներն էին Գ.Չոհրապը, Յ. Շահիրիկյանը, Վահան Թեթեյանը, Յ.Գալֆայանը և Գ. Տեր-Մովսեսյանը⁷⁹¹:

Հայկական բարենորոգումների ինդոլի լուծման առնչությամբ երիտթուրքական կառավարության որդեգրած մոտեցումը խիստ բացասական էր: Հակադրվելով իրթալաֆականների առաջադրած բարենորոգումների նախագծին՝ երիտթուրքերի նոր կառավարությունը հանդես եկավ ամբողջ կայսրության տարածքում բարենորոգումներ իրականացնելու առաջարկությամբ ու ծրագրով: Ըստ Էուլթյան, դրանով նրանք նպատակ էին հետապնդում ոչ միայն բացառելու հայկական բարենորոգումների հարցում օտարերկրյա պետությունների միջամտությունը, այլև, առհասարակ, հակադրվելու հայությանը ինքնավարություն շնորհելու տրամաբանությանը:

Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության որոշմամբ 1912թ.-ի դեկտեմբերին Գրիգոր Չոհրապը, Հակոբ Չավրյանը, Էդվարդ Ակունին, Սիմոն Չավարյանը, Ռուբեն Չարդարյանը և Վահան Փափագյանը պատրաստեցին բարենորոգումների մի ծրագիր, որը, որպես ծրագրային նախանյութ, նախատեսվում էր ներկայացնել հայոց պատրիարքարանին⁷⁹²: Դաշնակցականների առաջարկով պատրիարքարանի նախագծի հիմքում դրվեց Դաշնակցության կողմից կազմված վերոհիշյալ նախագիծը, որն անմիջապես վավերացվեց Արշարունի պատրիարքի կողմից⁷⁹³: Պատրիարքարանի նախագծում ներառվեց նաև Ամենայն հայոց կաթողիկոսի կազմած նախագիծը, որը, ըստ Էուլթյան, Հայկական հարցի առնչությամբ ռուսական քաղաքական կամքի արտահայտությունն էր: Պատրիարքարանը ստացավ նաև Հայոց ազգային պատվիրակության նախագիծը, որը, սակայն, խիստ եական տարբերություններ ուներ պատրիարքարանի կազմած նախագծի հետ համեմատությամբ: Այն գրեթե ամբողջությամբ հիմնված էր 1895թ.-ի մայիսյան ծրագրի դրույթների վրա, մասնավորապես՝ ընդհանուր քննիչի՝ ազգությամբ թուրք լինելու և եվրոպական պետությունների կողմից վերահսկիչ մարմին ստեղծելու հանգամանքների: Այդ պատճառով պատրիարքարանը որոշեց Ապահովության հանձնաժողովի անդամ և քարտուղար Վահան Փափագյանին ուղարկել Փարիզ՝ Պողոս Նուբար փաշայի և պատվիրակության մյուս անդամների հետ բանակցություններ վարելու համար: Ազգային պատվիրակության ծրագրի հիմքում ընկած էին հետևյալ փաստարկները՝

1. Բարենորոգումների նախագծում բացառել քաղաքական ինքնավարության բաղադրիչը,
2. Զանի որ 1895թ.-ի մայիսյան ծրագիրն ընդունվել է Օսմանյան կայսրության ու եվրոպական պետությունների համաձայնությամբ, հետևաբար այն դիտարկել որպես ուղենիշ հայկական բարենորոգումների ծրագրի համար,

⁷⁹¹ Փափագեան Վ., Հայկական Բարենորոգումները (1912-1914), «ՎԷՆ», Փարիզ, 1933, Բ, էջ 88:

⁷⁹² Տե՛ս Հայերու կացութիւնը Թիւրքիոյ մէջ ներկայացած վաւերաթղթերով 1908-1912, «Դրօշակ», Ժնեւ, 1913, N 2-3, էջ 31-36: Հմմտ.՝ Փափագեան Վ., Հայկական Բարենորոգումները (1912-1914), «ՎԷՆ», Փարիզ, 1934, Գ, էջ 63:

⁷⁹³ Նույն տեղում, էջ 64:

3. Չեղարկել եվրոպական տերությունների կողմից ընտրված եվրոպացի քննիչի հանգամանքը,
4. Ծրագրի իրականացման համար միջազգային մարմնի միջոցով հաստատել եվրոպական վեց պետությունների վերահսկողություն:
Սույն կետերի վերաբերյալ Վահան Փափազյանը ներկայացրեց պատրիարքարանի հետևյալ առաջարկությունները՝
 1. Թեև պետք չէ քաղաքական ինքնավարության կերպարանք հաղորդել պատրիարքարանի ներկայացրած պահանջներին, սակայն անհրաժեշտ է ապահովել հայ ժողովուրդի ապագա գոյությունը և ազատ զարգացման նախադրյալները,
 2. Մեր նախագծի հիմքում ևս ընկած է Մայիսյան բարենորոգումների ծրագիրը, սակայն պետք է հաշվի առնել նաև այլ միջազգային ու թուրքական վարչական կանոնադրեր,
 3. Մեր միակ իրական երաշխիքը կարող է լինել ընդհանուր քննիչի նշանակման ձևի և նրան տրվելիք իրավասությունների ինդիքը: Նա պետք է կախում ունենա ոչ միայն թուրքերից, այլև օտարերկրյա պետություններից: Ցանկալի է, որ այդ պետությունը լինի Ռուսաստանը:
 4. Վեց պետությունների վերահսկողության պահանջը վերադառնում է Բեռլինի 61-րդ հոդվածի և Մայիսյան ծրագրի տրամաբանությանը, այսինքն՝ Հայաստանը կրկին պետք է դառնա օտար պետությունների շահերի բախման թատերաբեմ, որից պետք է օգտվի Բարձրագույն Դուռը⁷⁹⁴:

Պողոս Նուբար փաշայի հետ բանակցություններից հետո հայոց պատրիարքարանի կողմից, ի դեմս Արշարունի պատրիարքի, Ս.Գարայանի և Գ.Չոհրապի, 1913թ.-ի ապրիլի սկզբին Կ.Պոլսում ռուսական դեսպանությանն ուղարկվեց պատրիարքարանի նախագիծը, որով Ռուսաստանը վերջնականապես իր ձեռքն էր վերցնում հայկական բարենորոգումների ծրագիրն առաջնորդելու պատասխանատվությունը:

Հայոց պատրիարքարանի կազմած նախագծի ազդեցությունը 1913թ.-ի հունիսի 4-ին Ա.Մանդեշտամի ներկայացրած նախագծի վրա: Ամիսներ տևած բանակցություններից հետո Անտանտի երկրների կառավարություններն ի վերջո համաձայնության եկան Օսմանյան կայսրության հայաբնակ նահանգներում բարենորոգումների նախագիծ կազմելու վերաբերյալ: Հատկանշական է, որ դեռևս 1913թ.-ի հունվարին Կ.Պոլսում ռուսական դեսպանությունն արևմտահայության քաղաքական պահանջները ձևակերպելու նպատակով նախապես դիմել էր հայոց պատրիարքարանին, որն Ապահովության հանձնաժողովի միջոցով գումարված նիստի ընթացքում պարտավորվել էր որոշել բարենորոգումների մշակման նախնական աշխատանքները և կարճ ժամանակահատվածում ներկայացնել ռուսական դեսպանությանը⁷⁹⁵:

1913թ. հունիսի 4-ին Կ.Պոլսում ռուսական դեսպանատան գլխավոր թարգմանիչ Անդրեյ Մանդեշտամի՝ հայկական բարենորոգումների վերաբերյալ պատրաստած ծրագիրն որոշակի վերապահումներով պրժանացավ օսմանյան կառավարության ու եվրոպացի դեսպանների հավանությանը⁷⁹⁶: Արդյունքում 1914թ.-ի հունվարի 26-ին (փետրվարի 8) մեծ վեճի, երիտթուրքական կուսակցության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Սայիդ Հալիմ փաշայի և Օսմանյան կայսրությունում Ռուստաստանի դեսպան Կոնստանտին Գուլկելիչի միջև կնքվեց համաձայնագիր, որով

⁷⁹⁴ Նույն տեղում, էջ 67:

⁷⁹⁵ Նույն տեղում:

⁷⁹⁶ Առավել մանրամասն տե՛ս **Mandelstam A.** La societeé des nations et les puissances devant le probleme armenien, Paris, 1926.

Բ. Դուռը հանձն էր առնում կայսրության հայաբնակ նահանգներում իրականացնել բարենորոգումներ⁷⁹⁷: Յիմնական դրույթների համաձայն՝

- Արևմտյան Չայաստանը բաժանվելու էր երկու նահանգի: Առաջին նահանգի մեջ ընդգրկվելու էին Տրապիզոնի, Էրզրումի և Սեբաստիայի (կենտրոնը՝ Էրզրում), իսկ երկրորդ նահանգի մեջ՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքի (կենտրոնը՝ Խարբերդ) նահանգները:
- Նահանգապետերի թեկնածությունն առաջադրելու էին եվրոպական պետությունները, հաստատելու էր սուլթանը:
- Նահանգապետերի ենթակայության ներքո գտնվելու էին վարչական, դատական և ոստիկանական իշխանությունները:
- Նահանգներում պաշտոնական գրագրությունը կատարվելու էր տեղի ժողովուրդների լեզուներով (հայերեն, քրդերեն և թուրքերեն):
- Նահանգապետերն ունենալու էին զինված ուժեր, որոնք պետք է հետևեին նահանգների ներքին կարգուկանոնին:
- Չայերին արտոնվելու էր կրել գենք մահմեդականներին տրված հավասար իրավունքով:
- Նահանգների վարչական խորհուրդները կազմվելու էին հավասար թվով մահմեդականներից ու քրիստոնյաներից: Նույն սկզբունքը կիրառվելու էր ոստիկանական և այլ պաշտոններ բաշխելիս:
- Օսմանյան պետությունը պարտավորվելու էր հոգալ հայկական դպրոցների պահպանության ծախսերը և այլն⁷⁹⁸:

Նույն թվականի օգոստոսի 2-ին Յովհաննես Արշարունի պատրիարքը հրաժարական տվեց, որից հետո ազգային և ընդհանուր ժողովների կողմից պատրիարքական փոխանորդ ընտրվեց Գաբրիել Եպիսկոպոս Ջևահիրջյանը, որ բարենորոգումների ծրագիրն առաջնորդեց մինչև 1914թ.-ի փետրվար, երբ Կ.Պոլիս ժամանեց նորընտիր պատրիարք Չավեն Տեր-Եղիայանը: Պատրիարքի ընտրության նախապատրաստական աշխատանքներից բացի Ջևահիրջյան Եպիսկոպոսը միաժամանակ սկսեց զբաղվել հայկական բարենորոգումների ծրագրով: Այսպես, օրինակ, 1913թ.-ի սեպտեմբերի 5-ին նա եվրոպացի դեսպաններին ներկայացրեց հայկական բարենորոգումների վերաբերյալ ռուսական տեսլականը ներկայացնող մի ծրագիր, որի համաձայն՝

- Օսմանյան կայսրության արևելյան վեց նահանգներից կազմվելու էր մեկ նահանգ,
- Այն ղեկավարվելու էր մեծ պետությունների հավանությամբ ընտրված եվրոպացի նահանգապետի կողմից,
- Նահանգապետը որևէ կապ չէր ունենալու Բ.Դռան հետ: Նահանգապետին էին ենթարկվելու վարչական ու դատական իշխանությունները,
- Նահանգային մեջլիսներում վերականգնվելու էր մուսուլմանների և ոչ մուսուլմանների հավասար ներկայացվածության իրավունքը,
- Բարենորոգումների հսկողությունն իրականացնելու էին եվրոպական պետությունները⁷⁹⁹:

Վերոհիշյալ նախագիծը եվրոպացի դեսպանների կողմից արժանացավ խիստ քննադատության. նրանք կարծում էին, որ օսմանյան պետությունը չէր կարող հանդուրժել իր տարածքում ինքնիշխան նահանգապետության գոյությունը⁸⁰⁰:

⁷⁹⁷ Աճառեան Գ., նշվ. աշխ., էջ 75-77:

⁷⁹⁸ Լիպեթի Զ. Յ. Դաշնակցութեան (խմբագիր՝ Փամպուբեան Ե.), ԺԱ. հատոր, Պեյրուպ, 2015, էջ 46, 47:

⁷⁹⁹ Güllü R. E. նշվ. աշխ., էջ 419:

⁸⁰⁰ Նույն տեղում:

Մասնավորապես Ֆրանսիայի դեսպանը պատրիարքական փոխանորդին ուղղված պատասխան նամակում անհամաձայնություն էր արտահայտել այդ հարցի առնչությամբ. «Այստեղ նշված պահանջները վկայում են այն մասին, որ մեծ պետությունների համաձայնությամբ ստեղծվում է մի ինքնիշխան Նահանգապետություն, որը որևէ կապ չունի օսմանյան պետության հետ»⁸⁰¹:

Ամփոփելով նշենք, որ հայոց պատրիարքարանը բացառիկ դերակատարություն ունեցավ հայոց բարենորոգումների ծրագրի մշակման ուղղությամբ: Թեև հայությանը վիճակված այդ ծանր ժամանակաշրջանում հայոց պատրիարքի պաշտոնում, ժամանակակիցների կարծիքով, ընտրված էր «ոչ հարմար» թեկնածու, սակայն պատրիարքարանի շուրջը համախմբված ազգասեր գործիչների շնորհիվ հնարավոր դարձավ ոչ միայն հայության քաղաքական պահանջները լսելի դարձնել եվրոպական պետություններին, այլև Ռուսաստանի անմիջական Նախաձեռնությամբ կազմված ծրագրի հիմքում ներառել պատրիարքարանի Նախագիծը, ինչը լիովին արտահայտում էր արևմտահայության սպասումները:

EVOLUTION OF ARMENIAN ISSUE: ARMENIAN REFORMS PROGRAM DURING THE TERMS OF PATRIARCH HOVHANNES ARSHARUNI (1911-1913)

SERGEY MANVELYAN

PhD Student of Mesrop Mashtots Research Institute of Ancient Manuscripts, Yerevan, Republic of Armenia

The article is describing the Reforms in the Armenian-populated provinces of the Ottoman Empire in 1908, after the Young Turks' revolution, initiated by the Armenian Patriarchate of Constantinople, led by the Patriarch Hovhannes Arsharuni (1911-1913). The steps taken by the Patriarchate in cooperation with the Dashnaksutyun Party (Armenian Revolutionary Federation) during the reign of Patriarch Hovhannes Arsharuni to create the Armenian Reform Program are considered in detail. In particular, the Patriarchate's negotiations with both the government and the governments of the Entente Countries, and Poghos Nubar Pasha, Head of Armenian National Delegation. The purpose of this article is to separate and explore the role of Armenian Patriarchate of Constantinople in the context of reconsidering the Armenian Question, based on newly revealed materials, emphasizing their historical importance and significance of the source. The bibliographical sources, used in this article, had been viewed from the perspective of implementing a number of issues, to cover activity of the Armenian Patriarchate of Constantinople, number of organized Commissions, unveil impact and importance of the project prepared by the Patriarchate, and later on included in the report of Chief translator of the Russian Embassy in Constantinople Andrey Mandelstam, submitted on June 4th, 1913, on Armenian Reforms Project. The article was written by the methodology of scientific impartiality and analysis, critically approach is used to the source and research. As a result, we prove the steps taken by the Armenian Patriarchate of Constantinople have greatly contributed to Armenian political reforms in Western Armenia regarding the implementation of reforms from the point of view of the requirements.

Keywords: *Armenian Issue, Armenian Patriarchate of Constantinople, Hovhannes Arsharuni Patriarch, Armenian Reform Program, Armenian National delegation, Young Turks party, Armenian Revolutionary Federation Party Dashnaksutyun, The Entente states.*

⁸⁰¹ Նույն տեղում:

РАЗВИТИЕ АРМЯНСКОГО ВОПРОСА: ПРОГРАММА АРМЯНСКИХ РЕФОРМ ПРИ ПАТРИАРХЕ ОВАНЕСЕ АРШАРУНИ (1911-1913 ГГ.)

СЕРГЕЙ МАНВЕЛЯН

*аспирант научно-исследовательского института
древних рукописей им. М. Маштоца,
г.Ереван, Республика Армения*

Статья рассматривает реформы, инициированные Армянским Патриархатом Константинополя в армянонаселенных провинциях Османской империи в 1908 году, после государственного переворота и захвата власти младотурками. Подробно рассматриваются шаги по созданию Программы Армянских реформ, предпринятые Патриархатом при сотрудничестве с партией Дашнакцутюн (Армянская революционная федерация) во время правления Патриарха Ованеса Аршаруни (1911-1913). В частности, это переговоры Патриархата как с правительством, так и с представителями стран Антанты и главой армянской национальной делегации Погос Нубар-пашой. Целью данной статьи является рассмотрение и изучение роли Армянского Патриархата Константинополя в контексте пересмотра Армянского вопроса на основе новоявленных материалов, подчеркивая их историческую важность и значение источника. Библиографические источники, использованные в этой статье, рассматривались с точки зрения реализации ряда вопросов, чтобы охватить деятельность Армянского Патриархата Константинополя, количество организованных комиссий, раскрыть влияние и важность проекта, подготовленного Патриархатом и позднее включенного в представленный 4 июня 1913 года доклад главного переводчика посольства России в Константинополе Андрея Мандельштама о проекте Армянских реформ. Статья написана по методологии научной беспристрастности и анализа, критически использован подход к источнику и исследованию. В результате мы показываем, что шаги, предпринятые Армянским Патриархатом Константинополя, внесли значительный вклад в политические реформы Западной Армении и закрепили политические требования местных армян.

Ключевые слова: *Армянский вопрос, Армянский Константинопольский Патриархат, Патриарх Ованнес Аршаруни, Программа Армянских реформ, Национальная армянская делегация, партия младотурок, партия Армянская революционная федерация Дашнакцутюн, страны Антанты.*